ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն տեղեկատվական թերթիկը վերաբերվում է աշխատանքի & սոցիալական հարցերի ոլորտներում պետության կողմից մատուցվող հանրային ծառայություններին: Այն տեղեկատվություն է պարունակում ՀՀ Աշխատանքի & սոցիալական հարցերի նախարարության համապատասխան վարչությունների & ենթակա կազմակերպությունների գործառույթների, ինչպես նա& հեռախոսահամարների վերաբերյալ:

Մայիս 2004

Աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտում գործառույթներ իրականացնող պետական կառավարման հանրապետական մարմինը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է, որը կոչված է իրականացնելու վերոնշյալ բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

Ո՞Ր ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ Է ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՒՄ

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հանրային ծառայություններ է մատուցում հետևյալ բնագավառներում.
Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության բնագավառ.
Սոցիալական ապահովագրության և կենսաթոշակային ապահովության հարցերով զբաղվում է համանուն վարչությունը: Այն ծառայություններ է մատուցում սոցիալական ապահովագրության, կենսաթոշակային ապահովության, սոցիալական ապահովության քարտերի համակարգի ներդրման բնագավառներում: Ծառայություններն ուղղված են քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքի իրականացմանն ինչպես աշխատունակ տարիքում (ժամանակավոր անաշխատունակությունից, գործազրկության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրություն), այնպես էլ, կախված տարիքից և աշխատունակության կամ կերակրողի կորստից, նախկինում ունեցած եկամտի համարժեք փոխհատուցում ապահովելուն:

Կոնտակտներ.
Վարչության պետ՝ հեռ. 52-04-48,
կենսաթոշակային ապահովության բաժնի պետ՝ հեռ. 56-42-10,
սոցիալական ապահովագրության բաժնի պետ՝ հեռ. 56-42-10:

Սոցիալական աջակցության բնագավառ.
Սոցիալական աջակցության հարցերով զբաղվում է համանուն վարչությունը: Վերոնշյալ բնագավառում իրականացվող ամենակարևոր ծրագիրը աղքատության ընտանեկան նպաստի վճարման ծրագիրն է, որն իրականացվում է սոցիալական ծառայությունների 55 տարածքային գործակալությունների կողմից (Երևան քաղաքի բոլոր համայնքերում և բոլոր նախկին վարչական շրջաններում): Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների կողմից իրականացվում է նաև միանվագ դրամական նպաստի վճարման աշխատանքներ, որին աջակցում են նաև կից, հասարակական հիմունքներով գործող սոցիալական աջակցության խորհուրդները:

Կոնտակտներ.
Վարչության պետ՝ հեռ .56-53-63,
նպաստների բաժնի պետ՝ հեռ. 56-43-80,
մեթոդական օգնության բաժնի պետ՝ հեռ. 56-43-80:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառ. այս հարցերով զբաղվում է համանուն վարչությունը, որը բաղկացած է հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բաժիններից, ինչպես նաև «բժշկասոցիալական փորձաքննություն» գործակալությունից: Հաշմանդամների և տարեցների սոցիալական հիմնահարցերի լուծման ուղղությամբ իրականացվող աշխատանքների հիմնական նպատակը հաշմանդամներին հասարակություն ինտեգրումն է, նրանց համար մյուս քաղաքացիների հետ հնարավորինս հավասար պայմանների ապահովումը և տարեցների սոցիալ-հոգեբանական վիճակի վերականգնումը: Միայնակ տարեցներին և հաշմանդամներին սոցիալական սպասարկման և խնամքի ծառայություններ տրամադրվում են 2 տուն-ինտերնատներում՝ հետևյալ հասցեներով. գ.Հաղթանակ, 2-րդ փող 45 և ք.Երևան, Արմենակյան 197ա, ինչպես նաև միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկման

հանրապետական կենտրոնում (հասցե՝ ք.Երևան, Հ/Արևմտյան բ-1 թաղ, 61): Կենտրոնը մատուցում է մի շարք ծառայություններ:
Բուժ.ծառայություն. կատարում է տնային կանխարգելիչ համայցեր, անհատական բժշկական քարտերի ստեղծում, կանխարգելիչ միջոցառումների իրականացում, որն ուղղված է առողջության առաջնային պահպանմանը և խրոնիկական հիվանդությունների սրացումների կանխարգելմանը, առաջին անհրաժեշտության դեղորայքով և հիգիենիկ պարագաներով ապահովում: Ելնելով իրավիճակից՝ բուժումը կազմակերպվում է տնային պայմաններում, կատարվում են համայցեր ըստ կանչերի, իրականացվում են ընդունելություններ և համապատասխան բուժական միջոցառումներ, ստացիոնար բուժման անհրաժեշտության դեպքում օգնում են հիվանդին տեղավորելու ստացիոնար բուժ. հիմնարկում:
Իրավահոգեբանական ծառայություն. այն իրականացվում է սոցիալական, բժշկական, իրավաբանական և տարիքային (ծերունաբանության) հոգեբանության խնդիրների շուրջ: Աշխատանքները տարվում են հետևյալ ուղղություններով. հոգեբանական աջակցություն տարեցներին և հաշմանդամներին, անհատական հոգեբանական աշխատանք, հեռախոսային խորհրդատվություն, միջոցառումների կազմակերպում և անցկացում:
Քաղաքացիների բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնում են բժշկասոցիալական փորձաքննական գործակալության հանձնաժողովները: Հանձնաժողովները գործում են Երևանում և բոլոր մարզերում, ընդ որում, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում երկուական, մյուս մարզերում մեկական մարմին: Բացի ընդհանուր գործող հանձնաժողովներից, գործում են նաև երկու մասնագիտացված բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովներ՝ հոգեբուժական և աչքի, որոնք գտնվում են Երևան քաղաքում:

Այլ կոնտակտներ.
Վարչության պետ՝ հեռ.՝ 52-17-61,
տարեցների հիմնահարցերի բաժնի պետ՝
հեռ.՝ 52-17-61,
հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ՝
հեռ.՝ 52-17-61,
«Բժշկասոցիալական փորձաքննություն»
գործակալության պետ՝ հեռ.՝ 62-36-90

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերով զբաղվում է համանուն վարչությունը՝ կանանց և երեխաների հիմնահարցերի բաժիններով:
Վարչությունն զբաղվում է ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական վիճակի բարելավման, որդեգրման ենթակա երեխաների, որդեգրողների թեկնածուների, որդեգրողների և որդեգրված երեխաների կենտրոնացված հաշվառման, խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության վերահսկողությամբ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը ընտանիքում և խնամատարական կազմակերպություններում կազմակերպելու հարցերով:
Նախարարության համակարգում գործում են 8 մանկատներ, որոնցից 3-ը Երևանում, 2-ը Գյումրիում, մեկական Վանաձորում, Գավառում և Նոր Խարբերդ ավանում: Գործում են նաև 4 բարեգործական մանկատներ՝ Գյումրիում, Կոտայքի մարզի Կոտայք գյուղում, Սպիտակում և Մասիսում:
Վերոնշյալ բոլոր մանկատների վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ վարչությունից:

Կոնտակտներ՝
Վարչության պետ՝ հեռ.՝ 56-53-21,
Կանանց հիմնահարցերի բաժին. հեռ.՝ 56-53-21, Երեխաների հիմնահարցերի բաժին՝ հեռ.՝ 56-53-21:

Աշխատանքի և զբաղվածության վարչությունը զբաղվում է աշխատանքի, աշխատավարձի և զբաղվածության ոլորտում քաղաքականության մշակման հարցերով: Վարչությունն առաջարկություններ է ներկայացնում աշխատանքային օրենսդրության կատարելագործման և աշխատանքային հարաբերություններում սոցիալական գործընկերության զարգացման վերաբերյալ, բնակչության զբաղվածության կարգավորման նպատակով մոնիտորինգ է իրականացնում զբաղվածության պետական ծրագրերի մշակման և կատարման նկատմամբ, մշակում է աշխատանքի վարձատրության պետական կարգավորման քաղաքականությունը, առաջարկություններ է ներկայացնում աշխատանքի խթանման, արդյունավետության բարձրացման ու վարձատրության համակարգերի վերաբերյալ: Զբաղվածության ոլորտում է ներգրավված նաև «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունը՝ իր 51 տարածքային մարմիններով, որոնք տեղաբաշխված են Երևան քաղաքի համայնքներում և Հայաստանի բոլոր նախկին վարչական շրջաններում: Տարածքային մարմինների մասին տեղեկատվություն կարելի է ստանալ վարչությունից:

Կոնտակտներ.
Աշխատանքի և զբաղվածության վարչության պետ՝ հեռ. 56-53-54,
Աշխատանքի բաժնի պետ՝ հեռ. 56-53-54,
աշխատավարձի քաղաքականության բաժնի պետ՝ հեռ. 56-53-54,
զբաղվածության բաժնի պետ՝ հեռ. 56-53-54:

Բարեգործության ոլորտը համակարգում է Բարեգործական ծրագրերի համակարգման բաժինը, որը համագործակցում է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ, համատեղ ծրագրեր է իրականացնում բարեգործություն իրականացնող կազմակերպությունների հետ (սննդի, հագուստեղենի, գրենական պիտույքների բաշխման և այլն):

Կոնտակտներ՝
Բարեգործական ծրագրերի համակարգման բաժին՝ հեռ.՝ 52-58-93:

Նախարարությունն ունի քարտուղարություն՝ իր երկու բաժիններով՝ քաղաքացիների ընդունելության բաժին (հեռ. 565383) և ընդհանուր բաժին (հեռ. 520830):
Նախարարության կողմից մատուցվող հանրային ծառայությունների, ինչպես նաև նրա գործունեության առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնից (հեռ. 521431):

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՆԵՐՈՎ

ք. Երևան, Նալբանդյան 7, բն 2;
հեռ/ֆաքս. 223786, 540199, էլ. փոստ՝ yerevan@ayla.am
ք. Գավառ, մարզպետարանի շենք, 4-րդ հարկ, հեռ/ֆաքս. (064) 25503, էլ. փոստ՝ gavar@ayla.am:
ք. Կապան, Ա. Մանուկյան 1, բն. 72,
հեռ/ֆաքս (085) 62511, էլ. փոստ kapan@ayla.am
ք. Գյումրի, Տիգրան Մեծի փող. 1 բն. 2;
հեռ/ֆաքս. (041) 38236, էլ. փոստ gyumri@ayla.am:
ք. Վանաձոր, հեռ/ֆաքս. (051) 22317,
էլ. փոստ՝ vanadzor@ayla.am:
ք. Իջևան, Մարզպետարանի շենք,

հեռ/ֆաքս. (063) 62499, էլ. փոստ ijevan@ayla.am:
ք. Գորիս, Մաշտոցի փող. 3, 2-րդ հարկ.,
հեռ./ֆաքս (084) 25861, էլ. փոստ goris@ayla.am:

Նաև կարող եք այցելել ՀԵԻԱ վեբ կայք www.ayla.am և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վեբ կայք՝ www.mss.am հասցեներով:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից՝ ՓրայսուոթերհաուսՔուփերի և ՀՀ Կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ Միացյալ Թագավորության Միջազգային Զարգացման նախարարության կողմից տրամադրված միջոցների հաշվին: